



## Որբանո՞վ է կոռուպցիայի դեմ պայքարն արդյունավետ

09.02.2010 20:09

Լուսինե Վասիլյան  
«Ռադիոլուր»

«Կոռուպցիայի դեմ պայքարը փոխելու է դեմքը, անցնելու ենք առավել անզիջում ու կոշտ միջոցների»,- դեռ 2008- ին հայտարարեց հանրապետության նախագահը Ազգային ժողովին ուղղված ուղերձում: Նաեւ ընդգծեց. «Միջազգային չափորշիչներին համաքայլ, քրեականացնելու ենք կոռուպցիայի ցանկացած դրսեւորում: Հասարակության մեջ արմատավորելու ենք կոռուպցիայի հանդեպ բացարձակ անհանդուրժողականության մշակույթը: Պաշտոնի չարաշահումների հայտնաբերման ու հետապնդման մակարդակն անշեղորեն աճելու է, որի նախադրյալների վկան եք արդեն այսօր»:

Ուղերձին հետեւած մեկուկես տարվա ընթացքում ընդհանրապես, վերջին շրջանում հատկապես կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման դեպքերն աճ են արձանագրում: Մշակույթի նախարարի խորհրդականից մինչեւ քրեակատարողական հիմնարկի աշխատակից, բնապահպանական տեսչության պետից մինչեւ ոստիկանության կապիտան. քրեական լրահոսը գրեթե յուրաքանչյուր շաբաթ անմասն չի մնում պաշտոնեական դիրքի չարաշահման, լիազորությունները գերազանցելու, կաշառք տալու եւ ստանալու մեղադրանքով հարուցված քրեական գործերից:

«Առաջին հայացքից կարելի է գնահատել դրական, քանի որ երկու տարի առաջ նման միտում չի եղել ընդհանրապես», - կարծում է «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կազմակերպության ղեկավար Ամալյա Կոստանյանը:

«Եթե ավելի խոր ուսումնասիրենք հարցը, ապա կարելի է ասել, որ բացահայտումների այս աճը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է կոռուպցիան նվազեցնելու համար, քանի որ հիմնականում բացահայտումները սահմանափակվում են ցածր կամ միջին օղակի պաշտոնյաներով ու պետական ծառայողներով: Այն դեպքում, երբ երկրում համակարգային կոռուպցիա է եւ կա քաղաքական կոռուպցիա, ի լրացում վարչական կոռուպցիայի, պատկերացնել, որ միայն նման միջոցառումներով կարելի է հաղթահարել կոռուպցիան, սխալ է», - շարունակում է նա:

Դատախազությունում համոզված են, որ մանր ու միջին կոռուպցիայի դեմ պայքարում կուտակած վստահության պաշարով հնարավոր կլինի անցնել պայքարի հաջորդ՝ ավելի բարձր մակարդակներ:

«Գուցե առավել լայն շերտերի համար այդ դրական տեղաշարժը այնքան էլ տեսանելի չէ եւ շատ ավելի մեծ արդյունքներ էին անմիջապես ուզում գրանցել: Դատախազությունը հակված է առաջնորդվել հետեւյալ գործելաոճով՝ փոքր, բայց հաստատակամ քայլերով գնալ այս հանցատեսակի դեմ պայքարելու», - ասում է գլխավոր դատախազի մամուլի քարտուղար Սոնա Տռուզյանը:

Դատախազությունում նաեւ չեն կասկածում, որ կոռուպցիոն հանցագործությունների դեմ ակտիվացած պայքարը նաեւ կանխարգելիչ բնույթ ունի:

Կոռուպցիայի դեմ հայտարարված քրեական պայքարի արդյունավետության հարցում թերահավատ է մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը: Կոռուպցիայի դեմ այդպես չեն պայքարում՝ մեր գրույցի ընթացքում ասաց նա եւ ոչ թե պատճառի, այլ հետեւանքի դեմ հայտարարված պայքար որակեց:

«Կոռուպցիայի դեմ պայքարում են երկրում մոնոպոլ տնտեսական համակարգը վերացնելով, մրցակցությունը ապահովելով թե տնտեսական, թե սոցիալական, թե քաղաքական բնագավառներում: Սա է ստեղծում այն համակարգը, որտեղ կոռուպցիայի համար նպաստավոր միջավայր չկա: Իսկ միջավայրը թե նպաստավոր է, որքան ուզում են կոռուպցիայի դեմ պայքարեն, դա պայքար է հետեւանքների դեմ եւ միշտ չէ, որ կոռուպցիայի պատճառների դեմ է: Հաճախ թույլ օղակներ են գտնում ու ցույց տալիս, որ պայքարում են կոռուպցիայի դեմ»: